ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 25.03.2024թ. հ. 45-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական տուրքի դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել: Օրենքով տեղական տուրքերի մասով տարաժամկետ վճարելու հնարավորություն նախատեսված չէ:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սահմանված են հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար տեղական տուրքի նվազագույն և առավելագույն դրույքաչափերը: Երևան քաղաքի ավագանին, Օրենքով սահմանված դրույքաչափի սահմաններում կիրառելով Օրենքով սահմանված գործակիցը, 2024 թվականի համար սահմանել է համայնքի վարչական տարածքում առևտրի օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափը:

Երևան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերի հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 42-Ն որոշմամբ, որոնցով սահմանված են համայնքի տարածքում գործող տեղական տուրքերի տեսակները, դրույքաչափերը և դրանց հաշվարկման կարգը, իսկ 2024 թվականի համար սահմանված տեղական տուրքերի գծով արտոնությունները կարգավորված են Երևան քաղաքի ավագանու 26.12.2023 թվականի N 44-Ն որոշմամբ:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետի կարգավորումների համաձայն՝ Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն ստանալու դիմումը մերժվում է, եթե՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Երևան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 42-Ն որոշմամբ սահմանվել են ոչ թե Երևան համայնքում տեղական տուրքերի գծով արտոնություններ

տրամադրելու, այլ Երևան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ ներկայացված Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը իրավաչափ չէ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ